Ч-16886

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 29 » 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0248-23

Ձեռնարկողը՝ «ԱՍԱՇԻՆ» ՍՊԸ
Երևան, Կենտրոն, Ձորափի փ. 40/25

Գործունեությունը՝ *Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան փողոց 22/29 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 02 4 8-23

<29> 12 2023թ.

Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան փողոց 22/29 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՍԱՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. «ԱՍԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նորք - Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան փողոց 22/29 հասցեում՝ 130 մ հեռավորության վրա գտնվող երկրորդական փողոցում: Կառուցապատվող հողամասի մակերեսը զբաղեցնում է 0.4 հա, նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման /կադաստրային ծածկագիրը՝ 01-009-0090-0262/: Կառուցապատման ենթակա տարածքն ազատ է կառուցապատումից, հողամասում բացակայում է ծառաթփային բուսականությունը և բուսահողը: Նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք են հանդիսացել - Երևանի քաղաքապետարանի կողմից տրված N 01/18-07/1-Դ-44620-357 առ. 13.06.2023թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Հիդրոերկրաբանական պայմանները գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա, ինչը պայմանավորված է բազալտների բարձր ճեղքավորվածությամբ և հրաբխային խարամի բարձր ֆիլտրացիայի առկայությամբ: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները տարածքում բացակայում են: Համաձայն տեղամասի ինժեներաերկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Նկարագրական մաս. Կառուցապատվող տարածքն ունի խիստ թեքություն դեպի արևմուտք, որի վերին և ստորին նիշերի տարբերությունը կազմում է 12մ: Տարածքի հարևանությամբ 8-10մ հեռավորության վրա առկա են 2-3 հարկանի 2 բնակելի կառույցներ, իսկ 24-26մ հեռավորության վրա առկա է 5 վերգետնյա հարկով 2 բազմաբնակարան բնակելի շինություն

Բազմաբնակարան բնակելի շենքի ճարտարապետական լուծումների համար հաշվի է առնվել տեղանքի ռելիեֆը, հողամասի տեղադիրքը՝ Երևան քաղաքի բացվող տեսարանով: Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը, շենքի արտաքին ոճի կազմակերպման մեջ շեշտը դրվել է տերասաձև և ժամանակակից դինամիկ ծավալային լուծումների, ճակատային մեծ ապակեպատ մակերեսների, դեպի քաղաք նայող մեծ տերասների համադրության վրա:

Շենքը փողոցին հարող մասում ունի 5 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկ: Առաջին հարկի հատակի ±0.000 նիշը համապատասխանում է 1169.05 բացարձակ նիշին:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես - 0,4 հա,
- կառուցապատման մակերես - 1919 մ^2 (47.9%),
- անջրանցիկ մակերես - 418.8 մ^2 (10.5%),
- կանաչապատման մակերես -1662.2 մ^2 (41.55 %),
- բնակելի ընդհանուր մակերես - 6614,9 մ^2:

Շենքն ունի երկհարկ ստորգետնյա ավտոկայանատեղի: Հաշվի առնելով բնական ռելիեֆը՝ ավտոկայանատեղիի մուտքերը նախատեսված են երկու իրարից անկախ՝ -2 և -3 հարկերի նիշերից: Շենքի -1 հարկում նախատեսվում է տեղակայել հասարակական նշանակության տարածքներ՝ միակողմանի բնական լուսավորությամբ: Շինությունը սեյսմիկ կարաններով բաժանում է 2 մասնաշենքի, որոնց համար նախատեսված է մեկ մուտքային հանգույց: Շենքի երկու մասնաշենքերն ունեն աստիճանավանդակներ՝ առանձին ելքերով:

Կառույցի 2-ից մինչև 5-րդ հարկերը ներառյալ, շահագործվելու են որպես բնակելի հարկեր: Բազմաբնակարան բնակելի շենքի ընդհանուր բնակարանների քանակը կազմում է 80 հատ, իսկ ավտոկայանատեղիների քանակը 69 հատ, ինչը կազմում է բնակարանների ընդհանուր քանակի 80%-ը: Տանիքը չօգտագործվող է:

Շենքի կոնստրուկտիվ համակարգն իրենից ներկայացնում է ե/բետոնե շրջանակային հիմնակմախք: Հիմքերը իրականացված են ե/բ միաձույլ ժապավենների տեսքով: Ստորգետնյա հարկերի համար արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել 1 շարք 200 մմ հաստությամբ ամրանավորված բետոնե բլոկներով: Վերգետնյա հարկերի համար արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել 1 շարք 200 մմ հաստությամբ ամրանավորված բետոնե բլոկներով, 80 մմ հաստությամբ հանքաբամբակ ջերմամեկուսիչ սալերով (արտաքին կողմից) և երեսապատել 40 մմ հաստությամբ քարե սալերով: Վերելակը նախատեսվում է իրականացնել հակահրդեհային պահանջներին համապատասխան: Աստիճանավանդակների դռները նախատեսված են E45 հրակայունության աստիճանով:

Բազմաբնակարան բնակելի շենքն ունի ստորգետնյա հարկեր, որոնք նախատեսված են ավտոկայանատեղիների համար և ըստ անհրաժեշտության կարող է ծառայել բնակիչների համար որպես պարզագույն թաքստոց:

Շենքի երեսապատման համար օգտագործվող նյութերն են՝ տրավերտինե, սև տուֆե, բազալտե սալեր և ներկված սվաղ:

Ինժեներական հաղորդակցուղիների համար (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրամատակարարում, հեռահաղորդակցության կապուղիներ) նախատեսված են առանձնացված հորաններ:

Շենքի ջեռուցումը նախատեսված է իրականացնել կենտրոնացված կաթսայատնով, սառնամատակարարումը՝ կենտրոնացված չիլեր համակարգով, որոնց սարքավորումները տեղադրվում են չօգտագործվող տանիքում: Տաք ջրամատակարարումն իրականացվում է սեփական կաթսայատնից, իսկ ավտոկայանատեղիներում էլեկտրական ջրատաքացուցիչներով: Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն բնակելի շենքի բնակարաններին: Որպես վառելիք օգտագործվում է բնական գազ: Բնակելի շենքի ջերմային ծախսերի

ապահովման նպատակով նախատեսված են 950կՎտ հզորությամբ երկու ջրային ավտոմատացված կաթսաներ, որոնք համալրված են մոդուլյացիոն գազայրիչներով:

Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսված են թերթավոր տաքացուցիչներ, նախատեսված է կուտակիչ բաք:

Ընտրված կաթսաների տեխնիկական բնութագրով պայմանավորված ծխագազերի արտանետումը բնական է: Կաթսայատան սրահում նախատեսված է ներածման և արտածման օդափոխություն բնական դրդմամբ: Արտածումը իրականացվում է երկու դեֆլեկտորների միջոցով:

Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան փողոց հ. 22/29 հողամասում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների: Ջրամատակարարումը նախատեսված է Նորք Մարաշ ջրամբարի հարակից տարածքի քաղաքային ջրատարից՝ /d=500մմ/, ջրահեռացումը՝ Չարենցի փողոցով անցնող d=300 կոյուղագծով: Խողովակները տեղադրվելու են ստորգետնյա եղանակով: Հակահրդեհային կարիքների ջրամատակարարումն ապահովելու համար նկուղային -3-րդ հարկում նախատեսված է 2 հատ երկաթբետոնե ջրամբար և պոմպային կայանք: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են: Ավտոկայանատեղիում նախատեսված է ավտոմատ հրդեհաշիջման համակարգ: Բնակելի հարկերի միջանցքներում և կաթսայատանը ևս նախատեսված են հրշեջ ծորակներ:

Բազմաբնակարան բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերը հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր: Կոյուղու կանգնակները նախատեսված են օդափոխության հորանների մեջ: Ավտոկայանատեղիում բոլոր կոյուղու պոլիվինիլքլորիդային PVC խողովակները նախատեսվել են բազալտե բամբակի մեկուսացումով, ամրակապելով մետաղական ցանցով:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնցից ջրերը դրենաժային պոմպով մղվում են և միանում շենքից դուրս եկող հեղեղատար կոյուղու ինքնահոս գծին:

Բնակելի շենքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների և գործող պայմանագրի: Ստորգետնյա ավտոկայանատեղիում նախատեսվում է կառուցել երկտրանսֆորմատորային ենթակայան՝ համապատասխան հզորությամբ: Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են՝ արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, բարձր արդյունավետության ժամանակակից ջերմամեկուսիչների և ջերմամեկուսիչ նյութերի օգտագործում, իսկ օդափոխության համակարգում՝ բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները և տեխնիկական լուծումները ներառված են հայտում և կիրականցվեն Շինարարության կազմակերպման նախագծի համաձայն: Կառուցապատման աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 36 ամիս: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 17521 խմ ընդհանուր ծավալով

հողային զանգվածի հանույթ, որից 5260 խմ ծավալը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ մնացորդայինը կօգտագործվի տարածքի հարթեցման համար:

Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը նախատեսված է իրականացնել մասնագիտացված կետերում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ պատրաստի վիճակում, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության փուլի համար անհրաժեշտ ջուրը՝ շինհրապարակի ջրցանման, անիվների լվացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար ընդհանուր հաշվարկվել է 3468.6 մ3/շին.ժամ/, ինչը նախատեսված է շինհրապարակ բերել ավտոցիստեռններով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքները կապահովվեն բերովի ջրով՝ տարաներով, իսկ աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններով:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն փորման, բեռնման, հողային զանգվածների տեղափոխման աշխատանքներով, շինարարության ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում շինհրապարակի պարբերաբար ջրցանում /օրական 2-3 անգամ/,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքերի ժամանակ շինությունների ծածկում՝ փոշու տարածումը կանխող ցանցով:

Շինարարության ընթացքում շինհրապարակի հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար, շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակում նախատեսված է անվադողերի լվացման կետ, որտեղ կլվացվեն անվադողերը և դուրս կգան շինհրապարակից:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում սահմանված ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Հայտում ներկայացվել են նաև տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով շինհրապարակում շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ հիմքերի վրա (ավազե, մետաղական կամ բետոնե), բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերը շրջակա տարածքներ, իսկ նավթանյութերի արտահոսքը հնարավոր կլինի կանխել՝ ապահովելով շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները, այդ թվում՝ շինարարության ընթացքում առաջացող՝ 120 խմ ծավալով շինարարական աղբը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման համար, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և ռիսկերը նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսվել են միջոցառումների համալիր /որում ներառվել են նաև հակահրդեհային միջոցառումներ/:

Շինարարության փուլի համար նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները, ներառյալ՝ աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները, ամփոփվել են բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագրում: Կառուցապատողի կողմից ըստ ժամանակացույցի իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը վերահսկելու նպատակով: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը հաշվարկվել է 1190 հազ. դրամ ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ շինարարության փուլում շինհրապարակի ջրցանումը, շինհրապարակում մշտադիտարկումների իրականացումը՝ ուղղված անվտանգության կանոնների պահպանմանը, ինչպես նաև մթնոլորտային արտանետումների, հողային ծածկույթի, աղմուկի և թրթռման մակարդակի չափումներին, որոնց համար նախատեսված է ժամանակացույց:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության հետ: Մինչև ծառատնկման աշխատանքները սկսելն անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել ագրոտեխնիկական միջոցառումներ և անցկացնել ոռոգման համակարգ: Ոռոգումը նախատեսված է ցնցուղային եղանակով՝ ռետինե խողովակներով: Ոռոգման նպատակով ջրամատակարարումն ապահովվելու է տեխնիկական պայմաններին համապատասխան:

Կանաչապատման համար նախատեսվում է տնկել տեղի կլիմայական պայմաններին համապատասխան ծառաթփային բուսականություն /Թխկի սրտատերև կարմիր, Գնդաձև իլենի, Գնդաձև թույա, Սակուրա, Բարբարիս, Ապիրակ, Ֆորզիցիա, Եղեվնի կովկասյան և այլն/: Կանաչապատ գոտիներում կիրականացվի նաև սիզամարգի տեսքով կանաչապատում՝ 1280 քմ մակերեսում: Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար՝ իրականացնելով նորատունկ կանաչ գոտու

վիճակի մշտադիտարկումներ՝ կպչողականություն չապահովող ծառատեսակները նորերով փոխարինելու նպատակով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում, Նորք-Մարաշ վարչական շրջանում անցկացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննության գործընթացում Նորք-Մարաշ վարչական շրջանում 2023 թվականի դեկտեմբերի 20-ին իրականացված երկրորդ քննարկման ընթացքում բարձրացվեցին հարցեր՝ կառուցապատման աշխատանքների ընթացքում պարտադիր միջոցառումների իրականացմանը, որոնք վերաբերում են փոշեորսիչ ցանցերի օգտագործմանը, հարակից տարածքներում բնակիչների բնականոն առօրյային և երթևեկությանը չխոչընդոտելուն և կառուցապատման ցուցանիշների վերաբերյալ: Նշված հարցերին տրվել են պատասխան հիմնավորումներ և ամրագրվել են շինարարական աշխատանքների ընթացքում որպես պարտադիր կատարման ենթակա պահանջներ:

Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը և շինարարության ժամանակահատվածը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել Հայտի Բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների և Մոնիթորիգի պլանում ամփոփված միջոցառումների և գործողությունների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀՇՆ Ի-3. 01. 01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասին քաղաքաշինության նախարարի 2008 թ. հունվարի 14-ի թիվ 11-Ն հրամանով հաստատված նորմերով և պահանջներով:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակ մտնող և դուրս եկող մեքենաների համար սահմանել ժամանակացույց՝ չխոչընդոտելով ընդհանուր երթևեկությունը,
- լվանալ շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

2. Տարածքի կանաչապատման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի և հայտում ներկայացված կանաչապատման լուծումներին համապատասխան /ստեղծելով 1662.2 քմ մակերեսով կանաչապատ գոտի/, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և շինարարական աղբի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

4. Վերջանական նախագծման և կառուցապատման աշխատանքներում անհրաժեշտ է հաշվի առնել շենքերի և շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության լուծումները՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ-ի №426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՍԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ.Հովսեփյան փողոց 22/29 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Հերիքնազ Մկրտչյան